


ՀԱՄԱՐԱԹԵՐԹ

ԱՂՔԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 58

ՆԻՒ ԵՈՐԲ, ՀԱՄԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 17 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ



ՁԵՑՈՒՆԻ ՍԻՆՆԱԿԸ

ՁԵՑՈՒՆԻ ՆՊԱՍԸ

Աղեքսանդրիա Նոյ. 20, Իրրև նախաձեռնարկը Ձէյթունի հանգանակութեան կը փափաքիմ երկու խօսք բռնէ:

ՏԵԳՐԻՍԻ մէջ ցաւով նշմարեցի երկու բան: Նախ ամբողջ ամերիկաբնակ Հայոց մէջ գեղար կարելի եղած է բոլոր ժողովուրդին վաստակութիւնը վայելող գանձապատ մը գտնել: Երկրորդ, Լոյէլի յանձնարարը գատապարտելի սխալ մը գործած է՝ Ձէյթունի համար հանգանակած նպատակը Պօրտ ընկերութեան միջոցով գրկելու որոշումը ստորով: Այս սխալը այնքան պարզ է որ կը յուսամ թէ ոչ միայն ուրիշներու կողմէ չը պիտի կրկնուի, այլ Լոյէլի յանձնարարներն ալ պիտի բեկանէ իր այդ որոշումը՝ այլոց շարօրինակ չըլլալու ազնիւ նպատակաւ:

Փառով դարձր զրկելու եղանակին: Եւրոպայէն անցած ատեն, իմէջ այլոց, այս մասին անգլիացի հասարակական անձին մը խորհուրդը հարցուցի, և իրրև արդիւնք այդ անասկցութեան՝ սկզբնական առաջարկն պարտիմ բարեփոխել. այսինքն փոխանակ ուղղակի Հայկապի անգլիական հիւպատոսին զրկելու, հարկ է Անգլիոյ Արտաքին Գործոց նախարարութեան ձեռքով յղել հիւպատոսին, որ Հայկապի առաջնորդ Պետրոս վարդապետ ներկարարեանի գործակցութեամբ նպատակը կը բաշխէ: Նայն ատեն կրնայ իմաց տրուիլ Պօրտը Պարտաբարանին՝ առանց իրաւունք տալու սակայն դրամի բաշխումին խառնուելու: Պարտաբարանը կը հասկցունէ Ձէյթունցիներուն թէ այդ նպատակը ուղղակի Ամերիկայի Հայոց կողմէն կուգայ և ոչ թէ Եստրիներէն:

Ահա այս է ամենէն սպաշով եւ ամենէն ազգայնիկ կերպը, որուն վերայ երկար խօսիլը աւելորդ է:

Չայս իմտի ունենալով թող նոր Աշխարհի Հայ գաղութը եռանդով, բայց առանց ալմուկի, ջանադիր ըլլալ մինչև Ապրիլ պատահելի գումար մը ստեղծել, և այս կերպով կատարել Հանրային պարտաւորութիւն մը, որ վեր է ամեն անձնական շահերէ և նկատուածներէ:

Կ. Յ. ՓԱՓԱՋԱՆ

ՆԱՄԱԿ ԸՆԴՀ. ԳԱՆՁԱՊԵՏԷՆ

Նիւ Եորք, Դեկտ. 12. Խմբագիր ՏԵԳՐԻՍԻ

Ձեր նախաձեռնութեամբ երկրիս գանձան քաղաքներու մէջ կազմուած յանձնարարութեան ձեռնարկը Ձէյթունի կարօտեց համար հանգանակուած դրամներու իմի կերպով գումարուիլը յարմար գտաւելով, զիս ընդհանուր գանձապատ ընտրեց այդ յանձնարարութեանը քուէն: Ինչպէս յայտնի է ձեզ, նախապէս մերժեցի ընդունիլ զայս պաշտօն՝ որոշ հասկացողութիւն մը չունենալուս համար ոչ նպատակին ոչ ալ դրամը զրկուելու եղանակի մասին. բայց երբ բացատրուեցաւ թէ Ձէյթունի մէջ սով կար և մեծ թշուառութեան մատնուած էին՝ աղքատութեան պատճառաւ՝ բազմաթիւ հայեր երկու սեռէ և ամեն հասակէ, յոժարեցայ ընդունիլ:

Մարդու մը պարտականութիւնն է ըստ իւր կարողութեան հոգ տանիլ նախ իւր անձին, յետոյ իւր ընտանեաց, յետոյ իւր ազգին, յետոյ ընդհանուր մարդկութեան. այս ըսկզբունքներն հետեւելով, քանի որ կ'ենթադրուէր թէ կրնայի ծառայութիւն մը մատուցանել Ձէյթունի հայ կարօտեցոց, պարտականութիւն համարեցի ընդունիլ այդ պաշտօն:

Այս իմգրոյ մէջ ո'ր և է քաղաքական կամ կուսակցական նկատողութիւն չի կար, գործը պարզապէս մարդասիրական էր — կարօտեաններու օգնել: Այս պատճառաւ նաև հակառակութիւն չի ցցուցի այս Ծառաթիւր կրկնայ անգլիական զանգուի մէջ մաս առնելու: Այժմ կ'իմանամ որ հանրութեան մէջ տարածայնութիւն մը ելած է՝ իր թէ այս կամ այն քաղաքական կերպարանք ունեցող միութեան կողմանէ կը լինի այս ձեռնարկը: Այս գաղափարը բողոքովին անհիմն է. զի անձամբ ձեռնարկները լաւ գիտեն որ ես ո'ր և է կուսակցութեան չեմ վերաբերած երբէք. ոչ Հնչակեան, ոչ Դրօշակեան, ոչ Արմէնական և ոչ ցարդ կազմուած կամ լուծուած որ և է կուսակցութեան մէջ չեմ պաշտօնավարած և ոչ ալ պաշտօնավարելու տրամադրութիւն ունիմ: Ես պարզ հայ անհատ մ'եմ, կը սիրեմ ազգս և ազգայիններս. ամեն մարդ կոչուելու արժանի մարդու ընկան եւ զող զգացումէ մղեալ, ինչպէս վերը ըսի, ձեռքէս եթէ ծառայութիւն մը գայ, մատուցանել կուզեմ: Իմ հասկացածս՝ Ձէյթունի կարօտեցոց մարդասիրական պարտականութիւններն մերովսեանն կատարելու համար, այս գործով եւթ զբաղելու նպատակաւ կազմուած յանձնարարութեանը եկած դրամներ նկատած եմ ստացած գումարներս, ինչպէս էր քաղաքիս յանձնարարութիւնը. իսկ եթէ ցարդ ինձ զրկուած դրամներէն կայ մաս մը որ այս որոշ զգացումէ տարբեր ընտրութիւն ունեցող որ և է նպատակաւ կամ մասնաւոր կուսակցութեանը ձեռնարկ:

հանգանակուած են, ևս դորձ չունիմ ատոր հետ և կը խնդրեմ որ մինչև ատան և հինգ օր ետ ուզեն այդ դրամներն:

Խնդրելով որ հրատարակէք ներկայս իւրըր ամենեցուն:

Մնամ յարգանքով
Յ. Ս. ՓԱՓԱՋԱՆ

Ձէյթունի ի նպատակ Ամերիկայի Հայոց մէջ սկսած հանգանակութիւններն կը թուի թէ կրկին և կրկին անգամ հարկ է ըսել որ կարօտեցոց ու սովեակներու համար է՝ բառին բովանդակն անհակութեամբ. և թէ այս հանգանակութիւններն կատարող բոլոր յանձնարարներն այս և այն քաղաքի անդական ժողովուրդէն ընտրուած են՝ առանց ո'ր և է յարաբերութիւն ունեցող ըլլալու կուսակցութեանց հետ:

Կը ցաւինք սակայն թէ կարգ մը չարամիտներ — մասնաւոր քաղաքիս մէջ, ուր այս մարդասիրական նպատակի համար մեծ գումար մը գոյացնել կ'ակնկալուի — այս ձեռնարկ քաղաքական կամ կուսակցական գոյներով ներկել ջանացած են՝ ի հարկէ նպատակին վնասելու գոյնային դիտումով: Երբ վերջի օրերս այս անհպատակ շնչոցներն հասան դրամ տալու արամադրութիւն չունեցող անտարբեր գաղափարներ, որոյ մէջ նըշանաւոր սեղ կը բռնեն մեծատուններէ ոմանք, անորմէ շատ սիրալիր ընդունելութիւն մը գտաւ, վասնզի ասոնք՝ նուէր մը տալու փորձանքէն կրնալ ազատելու համար՝ այդօրինակ փոփոխութեան և այս ու այն մութ անկիւնէն եկող շնչոցներու պէտք ունէին: Անօթիին հայ տալն ալ քաղաքական հանգամանք կրնայ ունենալ եղբ'... ինչ — Ձէյթունցի սովեակը թող սալու ենք որ անօթութեան մեռնի՝ ինքզինքը պաշտպանած ըլլալու քրտնակալ յանցանքը գործած ըլլալուն համար...: Սակայն ինչ ըսենք «խլտարին ցուրտն է մահանայ»:

Այս երկկող չի պիտի զարմանաք եթէ, բայց քանի մը յարգելի բացառութիւններէ, մեր հարուստ գաղափարը բացակայութեամբ փայլած գտնենք Ընթացիկ Բայթ Զօրի օթեակներուն մէջ: Սակայն կը հաստանք թէ հասարակ ժողովուրդը — ազգին ջիղն ու հոգին — պիտի փութայ նորէն իր հաւաքական ուժով թափուրը լեցնել ու պահ մը ձայնակցիլ Ռուսահայ մեծ բանաստեղծի հռչակաւոր երգին...:

Ամերիկայի Հայը իւր Ձէյթունցի ազգակցաց կ'օգնէ ոչ թէ որովհետեւ Ձէյթունցի են, այլ որովհետեւ հայ են և կարօտ են. և տարակոյս չկայ ընտել թէ միևնոյնը պիտի ընէր՝ եթէ կարօտութիւնն մի ուրիշ գաւառի մէջ գտնէր այսօր: Հայ որբերուն համար եղած հանգանակութիւններն, կազմուած ընկերութիւններն և եօթնականներն, որք իրենց գործ կը շարունակեն անվատ, կենդանի եւ թարմ ապացոյցներ են այս մասին:

Արդեօք հայ որբերն ալ Ձէյթունցի էին...:

Այս հանգանակութեան և ջանքերուն կուսակցական գոյն ու հանգամանք տալը սե զրպարտութիւն մ'է, որովհետեւ բոլոր յանձնարարները կազմուած են ընդհանուր ժողովուրդի քուէով, և կը պարունակեն ամեն գաղափարի, համոզման ու դաւանութեան վերաբերող անհատներ: Սե սիրա ու սե հոգի ունեցող մէկը միայն ըլլալու է այն անձը, կամ անձինքը, որ կամ որք այս օրինակ զրպարտութեամբ մը մասնակցութեան և այն անդամներն, որք կուսակցութեան մը չեն վերաբերուի և չեն ալ ուզեր վերաբերուած նըրկատուի՝ իրենց անձնական պատճառներու համար:

Եւ որչա՞փ կամայ թէ ակամայ մասնիչներ ունինք եղեր հոս, մեր ժողովուրդի ծոցին մէջ...:

Անոնք որ դրամ տալ չեն ուզեր, անօթութեան տառապող գէթ փոքրիկներու սիրոյն ըլլայ, թող ձեռքն պահ մնան. մենք սուր չունինք որ բռնի նուէր մը պահանջեն իրենց մէջ: Թող իրենց դրամը ամօր մը բանտարկեն զրամասան մէջ: Բայց երբ իրենց այս սե անտարբերութիւնն զրպարտութիւններ ընելով ճերմկեցնել կը ջանան, իրաւունք կուտան ամեն Հայու ըսել:

Վասեր...! Մ. ՍՄԲ.

ՀԱՆԳԻՍԻ ՄԱՍԻՆ

—Քաղաքիս ազատ լսարանը ինչպէս նաև Ուէսթ Հոպըքընի լսարանը գոց պիտի մնան վաղը ի պատաս այս երկկողին հանդիման:

—Ընթացիկ Բայթ Զօրը բաց պիտի ըլլայ ժամը 6ին: Փոփոքողներն կրնան նուէրին հետեւին բերել. ժողովարարահին դուռը՝ կարելի է մըսայ և Օթեակի տոմը գնել: Օթեակները ընտանիքներու համար պահուած կարծելու չէ. քանի մը բարեկամներ կրնան միասին օթեակ մը գնել, եթէ փոփաքին:

—Դադարի ժամանակ թեթև կեդարակուր մը, սէնտուիչ, պաղպաղակ, բէյք, թէյ, սուրճ ևն. պիտի վաճառուին՝ յօգուտ կարօտեցոց. ծանօթ ազգայիններ պիտի ծառայեն սեղանի վրայ: Գիները չափաւոր են:

—Օթեակ գնողներու ու նուէրներ զրկողներու անուշներն հաղիւ կարելի պիտի ըլլայ հրատարակել գաղտ շարթու:

—Հանգէսը պիտի սկսի ժամը 8ին ամերիկեան ժամադրութեամբ՝ հոգ չէ եթէ այդ ժամուն ժողովուրդի մեծ մասը հասած չըլլայ տակալին: Ծանձնարարութեամբ ստիպուած է այս որոշումը ձեռնարկեմ կատարել՝ ժամանակ չահելու համար. ուստի կը խնդրուի ժողովուրդէն որոշեալ ատենին ներկայ գտնուիլ:

—Ֆիլատելիֆիաէ կը գրեն թէ անդունջ ազգայիններէ մի քանին ներկայ պիտի գտնուին այս երկկոյ:



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի մինչև Շարաթ օրերը,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈՒՍՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

ՏԼ. ՍԹ. Տարեկան 10 Փրանք.

Տարեկան 1 50 Բաժանորդագրին կանխիկ վճարելի է միշտ: Վեցամսեայ 75 Բաժանորդագրին կանխիկ վճարելի է միշտ: Եռամսեայ 40

Մտր կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝

To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 17 1898.

ԱԶԳ

Տեղւոյ անձկութեան պատճառաւ մեր ֆաղաքականը, Պոսթմէն թղթակցութիւնը և ուրիշ լուրեր ստիպուեցանք յետաձգել այս շարթու:

ԱՆԱՐԻՒՆ ԿՈՏՈՐԱԾԸ

Ա.

Երեսուն հազար Հայ մանուկներ յօշոտուեցան, մէկ միլիոնէ աւելի հայեր ջարդուեցան...

Տաճկահայաստանի արիւնոտ կոտորածէն շատ աւելի աւերիչ ու քանդիչ կոտորած մը եղաւ հայութեան մէջ. շատ աւելի հայեր կոտորուեցան զեռ անցեալներէն: Ու այս կոտորածը ո՛չ թէ միայն չը ցնցեց ամբողջ մարդկութիւնը, այլ նոյն իսկ Հայը խորապէս չճգաց անոր աճեւթութիւնը ու սոսկումները:

Ջարդուեցաւ Սասունը — լայնաւ համայն հայութիւնը: Իսկ հայութեան կէսը ընտելից կ'ըլլայ, կաթիլ մը արցունք չը կայ հայութեան աչքին մէջ:

Անվրէժով ու անխռով լսեցինք կոտորածի լուրերը ու անձայն և անշուշտ կեցանք, որովհետեւ կոտորումն ու սոսկի-փոսկի եղաւ. առանց թուրքի ու քրիստի, առանց սապարի, առանց մէկ կաթիլ արիւնի ու... առանց... Սուլթանի:

Կովկասի բարեկեցիկ, «ազատ» ու «արգասած» Հայ ժողովուրդը անսուր ջարդուեցաւ «խաղաղութեան պտուղեալին» — Ջարին — խաղաղիկ հրամանովը, ու... այն օրերուն, երբ վասպուրականի Արծիւը իւր թեւերը տարածած էր՝ Արարտաի քովերէն՝ համօրէն հայութեան վրայ:

Սուլթանական արախողութիւնները միայն Հայոց արիւնը հոսեցուցին, բայց Հայոց մեծ յայտն ալ չ'սպաննեցին. հոսած արիւններուն մէջ երբէք չը խղճուեցաւ հայութեան ապագայի շողոզուն ու փրկուէա յայտը, այլ ընդ հակառակն, արիւնը աւելի զօրացուց մեր յայտը:

Արիւնէն յոյս ու փրկութիւն, ամեն ստան, ծնած են, ամեն ազգերու համար:

Ջարական անարիւն կոտորածներն են որոնք սպաննեցին... գէթ Ռուսաստանի հայութեան յայտըն. մէկ հայու քիթ չէ արիւնոտած, բայց միլիոն մը հայ մեռած է ազգին համար: Այլ հրատարակութիւնը ու ներօրակները՝ աւելի բանգէտ քան Համիտները, գիտէին թէ Հպատակ ժողովուրդի մը, որ իւր հին ու յատուկ լեզուն, կրօնքն ու ազգութիւնը ունի, սապարի հարուածներով կարելի չէ մոռցնել ամեն բան ու ձուլել զայն արիւն օտար ազգին հետ:

Եւ երկար սարիներէ ի վեր ձարերը միշտ ու միշտ աշխատած էին, խաղաղ միջոցներով, մոռցնել սոսկ հայուն իւր լեզուն, կրօնքն ու ազգութիւնը, և մասնաւոր լեզուն: Քանի մը ձարեր՝ մեր քանի մը կաթողիկոսներէ պահանջած էին անցեալին մէջ որ Ռուսաստանի մէջ եղող բոլոր Հայ դպրոցներու վարչութիւնը և մասնակարարութիւնը յանձնուի Ռուս կառավարութեան: Կաթողիկոսները ամեն անգամին, զգալով պահանջուածին գոհացում տալով ազգութեան մասը, ամեն անգամին ստիպուով վրանին չէին աւած զայն կատարելու ահաբախ պատասխանատուութիւնը, ու կաթողիկոսները մերժած էին Ռուսիոյ պահանջումները:

Պէտք եղածին շափ ազգը սակաւին չէ կրցած գնահատել Գեորգ և Մակար կաթողիկոսներու այս դարձողական խնդրոյն մէջ իրենց ցոյց տուած զիւրաւարտութիւնը և հոգածութիւնը: Երկու կաթողիկոսներու քաղաքականութիւնն էր իրենք երբեք իրենց հաւանութիւնով չը յանձնեն դպրոցները կառավարութեան, մինչև որ հասնի խնդիրը հոն՝ որ ձարական ստիպումները և զօրքերը՝ զինու զօրութեամբ՝ խուժեն և գրաւեն Հայ մանուկներու կրթութեան բարձրը:

Այս քաղաքականութիւնը շատ նուրբ էր և միշտ շահաւոր եղաւ մեզ համար մինչև վերջերս: Ոնց իրը պարզ է. եթէ Ռուս կառավարութիւնը մինակ խաղաղ միջոցներով ուզէր գրաւել մեր դպրոցները, ու իւր հաշույն չի գար որ մեծ ազմուկ հանէ ու «պօրով» առնէ, մենք ալ խաղաղօրէն չէինք ստի, կը քաշքէինք:

Իսկ եթէ Ռուս կառավարութիւնը բռնի ստնկու շափ ալ առաջ պիտի երթար — ինչ որ հաւանական չէ —, ան ստան գերագոյն զօրութեան յաղթուած, խիղճներն հանգարաւ, կը միտնարուէինք անիկալով ըրտաւ սլոք միայն. և կաթողիկոսները այն ժամանակ պիտի դառնային և ըսէին Հայ ժողովուրդէն. «Որդիներ, ի՛նչ ընենք, ստի գառազանով ու աղամտեղ սկուռ խաչերով չէինք կրնար դուրս վաճաղ մեր դպրոցներէն մարթիւնով զինուած խաղաղները, և մեծ պատասխանատուութիւն երբէք չը պիտի ծանրանար սրբազան ուսերուն վրայ:

Անցեալ տարուայ վերջերս՝ երբ կրկին Նիքոլայի կառավարութիւնը «խաղաղ միջոցներով» ուզեց Հայ դպրոցները, սրտերնիս այնքան մեծ վախով չը պաշարուեցաւ, որովհետեւ կ'սկիզբէինք Հայրիկ գէթ Մակարի շափ պիտի պաշտպանէր Ռուսահայերու այս գերագոյն շահը, և գէթ Մակարի շափ իրեն քաղաքականութիւն մը պիտի օճենար: Եւստիպարութիւնը դառն եղաւ. 3000 աւելի Հայ դպրոցներ, իրենց 30,000 ուսանողներովը և ահաբին կալուածներովը: Հայրիկի ձեռքերը յանձնեցին բերանարաց արջին. ու... հայութեան կորուստը ահաբախի ու անդարձան եղաւ:

Մինակ բողբոջներ երեցուն արքայազմանի սպան մտաւրին մէջ. նոյն իսկ ամենէն Հայրիկի անունն ալ թագուն դժգոհութիւնով մը արձանագրեցին «Մեծ Յեղափոխականի» օրով ու հաւանութիւնով կատարուած այս աւերու մը Ռուսահայերուն համար:

Ք Ն Ե Ա Գ Ա Տ Ա Կ Ա Ն

ԵՐԿԻՐՆԵՐ ԼՈՑՍԵՐ

«Մեծ սուտերը սուս գն» ըսուած է, և թիւրք մեծ սխալներն այ սխալ չեն համարուիր, վասն զի զօք չեն կրնար խաբել: Այս սեռակէտէ նայելով՝ հեռանկար չենք ստիպել թէ մեծ յանցանք մը ներկի է մեծ ըլլալուն համար. ընդհակառակը, յանցանքը որչափ ծանր՝ պատիժը նոյնքան անտանելի է ընդ հանրագոյն: Եւ երբ այսօր Երկրային Լոյսերը քննութեան բովին անցնել կուզանք նորէն, ընտանի է որ ըսենք. «Աստուած սղորմի հեղինակին» թէ և անոր սխալներն մէկը չեն կրնար համարել, բայց յանցանքը յանցանք կը մնայ յաւիտեան:

Պատուելի Յիւրիանի ամենէն անհիշելի ու աններկի քարոզը, որ լոյսերու այս գաւառին վրայ ամենէն ու ըրծը կը պատկերացնէ, «Փրկութեան Առաքելային» խորագրով ունի: Մենք չի պիտի ջանանք ուղղել այս քարոզի սրխախներն, զի, ինչպէս որ ըրինք, մեծ սխալները սխալ չեն, ամեն սք կրնայ ստանել զայս: Այս թէ ինչ կ'ընէ:

«Գնա և եկուր բառեր իրարմէ շատ տարբեր նշանակութիւն ունին: Որչափ որ արեւելքը արեւմուտքէն հեռու է և սարեր, անտնի ալ գնա և եկուր բառերուն նշանակութիւնը իրարմէ հեռու և սարեր է: Գնա բառը կը նշանակէ խրկել, հեռացնել. եկուր բառը կը նշանակէ բերել, մտնեցնել»:

Մեծ գիւտ չէ՞ այս. գնա բառը խրկել կը նշանակէ եղբ, իսկ եկուր՝ բերել, մտնեցնել: Ասկէ պայծառ երկնային յոյս մը ստանել չէինք սկիզբէն արդարեւ. բայց գնա և եկուրը իրարմէ այնչափ հեռու չեն՝ որչափ է արեւելք արեւմուտքէն: Ծարուսահեղ:

«Բուն հոս տեղն է քրիստոնէայ սեպուած պաշտօնեայինընդ, եկեղեցիներուն և անհասանելուն յաջողութիւն գտնելը կամ չը գտնելը: Անոնք որ փրկութեան գործին մէջը գնա գնա բառերը կը գործածեն՝ չեն յաջողիր և ժողովուրդը աւելի կը հեռացնեն: Անոնք որ եկուր եկուր բառերը կը գործածեն, կը յաջողին և ժողովուրդը աւելի երկնից թագաւորութեանը մէջ կը բերեն»:

Այս գնա և եկուր բառերը ի՛նչ մոգական հրաշքներ կը գործեն եղբ...: Մենք՝ հասարակ մահահանցողները՝ ընտ չէինք մտաբերէր թէ եկուր ըսողները միայն ժողովուրդը երկնից թագաւորութեան կրցած են արժանացնել: Այս ալ Աստուած արանութիւն է թիւրքս: Սակայն լուրջ կարգիւ հարցնենք թէ ի՛նչ տարբերութիւն կայ «Քրիստոսի գնա», եղբայր, հեռուէ անոր ու պահէ անոր պատուէրները» ըսելուն և «փրկութեան մէջէն փրկութեան եկուր, եկուր, եկուր» քարոզուած մէջտեղ: Մենք չենք կրնար հասկնալ: Քանի մը քաղաքներն ըսէինք. «Քանի մը տարիներ առաջ մեր սիրելի Հայ ազգին Տէր-տէրներէն մէկուն հետ սեռութիւն մը ունեցայ և անոր հետ մեր խօսակցութեան նիւթը հեռանային էր: Թէ ինչն է համար ժողովուրդները ճշմարիտ քրիստոնէայ չեն ըլլալ: Սէջ ըսաւ, Տէրաշէր, մեր ժողովուրդները անըզգամ ժողովուրդներ են: Ես ա ժողովուրդին համար ինչ որ ընել պէտք էր ըրի. կանոնաւոր կերպով պատարագներ մատուցի, ընտիր շարականները քաղցր ձայներով երգեցի, զօրաւոր քարոզներ պատարասեցի և սզգու կեր-

պով խօսեցայ. քարոզած ժամանակս արցունք թափեցի և քանի մը անգամներ բեմին վրայ ինքզինքս՝ գեւորներ զարկի և կրկին սո անգամ ժողովուրդը չ'ապաշխարեց: Երտակ էր Տէրաշէրն ըսածը. կանոնաւոր պատարագներ մատուցած էր, անոյ ձայն ունենալով երգած էր, այսու ա մենայնիւ ժողովուրդն ալ ըսածին պէս ապաշխարած չէր: Եւ ուստի ի՛նչ էր պատճառը: Պատճառը այս էր թէ ինքը քրիստոնէայ չէր, ինքը անգամ Տէրաշէր մըն էր, ինքը փրկութեան մէջը չէր. եկուր եկուր չէր կանչէր. բոլոր ժամանակ անոր կանչածը ազգու կերպով գնա, գնա, գայէք էր: Ինքը փրկութեան գուր հեռու կայներ էր, Թիւրքս ալ չի մէ հեռու, գայէք կ'ընէր ժողովուրդը: Գրիտոսոս հոն է, փրկութիւնը հոն է, գայէք և փրկուեցէք. և աս էր պատճառը որ ժողովուրդը չէր կրնար և չէր փրկուէր:

«Մեր Հայ կղերականները կը պօսան և կը կանչեն եկեղեցիներուն մէջ, բայց ժողովուրդը չ'ապաշխարեւ և ճշմարիտ Քրիստոնէայ չըլլար: Եւ բուն պատճառը սո է որ Հայոց կղերին մեծ ամասնութիւնը Քրիստոնէայ չէ»:

«Մի կրթար ան Տէրաշէրներուն, վարդապետներուն և եպիսկոպոսներուն ետեւէն որ կ'ըսեն և չեն կատարեր»:

Այս արգահատելի քարոզութեան պատասխանել չի պիտի փորձենք, վասն զի մեծ սխալներն իրենց պատասխանը հեռանկար կը բերեն: Կրնա՞ք արիւն մէկի մը որ արեւ յոյս չունի ըսողի մը հետ հակաճառել և պատճառարանել յանձն կ'առնէ:

Պատ. Յիւրիան կը ցուիւնք ըսել թէ միակ անգը չէ որ կը հաւատայ և կը քարոզէ թէ Հայ կղերն ու հեռաւոր Հայ Լուսաւորչական ժողովուրդը մեծաւ մասամբ՝ Քրիստոնէայ չէ, վասն զի սոսնց հստիկալով՝ կուրօրէն՝ կը հաւատայ Քրիստոսի կրօնքին: Այս սուս հաւատք ունեցողներուն իրաւունք պիտի տայինք անշուշտ եթէ կարենային ցոյց տալ գէթ մէկ անհաս, որ ամեն գաղտնիք կամ կրօնական վարդապետութիւն՝ մտթէ մտթիւրակալուն ճշգրտութեամբ սորված, փորձով հաստատած և յետայ հետեւ ըլլար Նազովրէցիի Սաշին: Ո՞վ չի գիտեր թէ Քրիստոնէութեան՝ ինչպէս նաև ամեն կրօնքի առաջին պայմանը սնույցման հաւատքն է...:

Իր վերջ խօսք, սո ըսենք թէ Հայը իր Քրիստոնէութիւնն գարեբէ ի վեր անմեղ արեւմուր, ազգային անքարմանելի ջարդերով ու զոհերով ապացուցած է արդէն. և եթէ այս ազգ, որ իր ազգային անկախութիւնը անգամ գոհ սուած է Նազովրէցիի Սաշին՝ ճշմարիտ Քրիստոնէայ չէ, ուրիշ քրիստոնէայ ազգ չի կայ աշխարհի վրա: Եւ նոյն Հայը իրաւունք ունի ծիծաղել այսօր երբ Քրիստոսի այս նոր աւետարանիւրը կ'ընէ:

«Թէ որ շատ յազնած ես, քունդ եկած է, գոնէ փրկութեան համար փախաք ունենալը նշանով մը յայտնէ. քնացած ժամանակը ձեռք վեր բռնէ, որ Յիսուս գիտնայ թէ փրկուել կուզես»...:

Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պաշտամունքը կանոնաւոր կերպով կառավարելու համար դպրոց դաս մը կողմէն ձեռնարկած լինելով՝ ձայնաւոր երկատարներու պէտք ունինք: Ուստի Ս. Եկեղեցւոյ երգեցողութեան քիչ շատ վարժարաններու ներքին կը շարունակէ կր խնդրենք յատկապէս որ համին գալ միանալ մեզի, սրպէս զի կարենանք միայն և կանոնաւոր դպրոց դաս ունենալ: Ի Դիմա՞յ Դպրոց Գոտոն Գարուդեա՝ ՀՍԿ ՎՍՐՍՆԱՆ

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ի Բ Ք

—Գերմանիոյ վեհապետական ընտանիքին Ս. Յակոբայ վանքը ըրած այցելութեան առթիւ, Երուսաղէմի Տ. Յարութիւն Պատրիարքը յոյժ կենցաղագէտ մը ըլլալու ապացոյցը տուեր է, կայսրուհիին նուիրելով հին կորուստար մը, որուն գեղեցկութեանը սքանչացած էր կայսրուհին: Վիլհելմ Բ. խոստացեր է Պերլին վերագործին՝ իր և արկիտը իւզաների պատկերները զրկել մեր վանքին, ուր կը գտնուին արգէն իր պատկեր և հօր պատկերները:

—Յայտնի է թէ իսրայէլական տակն ի վեր, Տասնամ Գարութիւն փաշան, իր բեռնորդ Տրդատ պէյի միջոցաւ բանակցութեան մտած էր Հայ. Յեղ. Գաշնակցութեան հետ, հայկական խնդրին կարգադրման մասին իրաւաստութեան մը յանգելու համար: Այժմ կ'իմանանք թէ Գաշնակցութիւնը, իր անուհետ մարմին միջոցաւ, անցեալ մտայ 21ին, Տրդատ պէյին յանձնար է իր պատասխանը: (Իրաւունք)

—Ընթերցողք կը յիշեն անշուշտ թէ վերջերս Տիկին Տիրատուրեան՝ քաղաքիս բարձրագոյն դատարանին գիտած և ամուսնալուծութիւն լընդըրած էր իր ամուսնինէն՝ շատ մը անպատմելի պատճառներու համար: միևնույն ժամանակ Տիկինն իրեն և իր զուգարկայ ծախքերն հոգալու համար շարքով 25, ու իր փաստարանին վերձարելու համար 500 սորար կը պահանջէր իր ամուսնինէն՝ մինչև դատին վերջնականապէս տեսնուին ու վճարուիլը: Ամուսն 5ին դատին այս վերջի մասը տեսնուեցաւ ըրորձարգոյն դատարանի մէջ ձըթիս Գօհոնի առջև. երկու կողմէն 100ի շափ վկայագիր (աֆիտէյլիտ) բերուած էին Հայ նպատակաւ ներթափան կարողութեան մասին: Յետ երկարաան քննութեան՝ դատարանը հրամայեց ըրու որ նպատակաւ շարքով 10 սորար վճարէ իր կնոջ և 50 սորար անոր փաստարանին, մինչև որ դատ վերջնականապէս վճարուի: Որոշոյն այս երկուսն էլ դատարանով օրէնքի հմուտ մարդիկ կ'ըսեն թէ Տիկին Տիրատուրեան և իր խորհրդատուներն յուսախար պիտի ըլլան այս անխտանակելի քայլը առած ըլլալուն համար:

—Անցեալ Ծարաթ երեկոյ քաղաքիս Գաշնակցական հրապարակային ժողովին ներկայ էին իրր 150 անձինք: Պ. Լեւոնեան, որ Պոսթմէնէ եկած էր, խօսեցաւ յեղափոխութեան օգուտներուն վրայ: Տ. Յ. Գ. պատմեց Գաղղիական մեծ յեղափոխութիւնը: Տ. Մարգարեան խրատեց չըրճահայեցութեամբ գործել. իսկ Պ. Չարչաֆճեան նոր յեղափոխութեան յարութիւնը աւանդ: Երգեր երգուեցան ու որոտասանութիւններ տեղի ունեցան: Տ. Տէր Ստեփանեան, ժողովին Աստեղակար, ամենուն շնորհակալ ըլլալով, ժողովը փակեց ժամը 12ին:

—Անցեալ Կիրակի երեկոյ Լօրէնսի մէջ ալ տեղի ունեցաւ Գաշնակցական մէկ հրապարակային ժողովը ի ներկայութեան 200ի շափ ազգայնոց և ընդ առնեսպետութեան Տ. Մարգարեանի: Տ. Ա. Լեւոնեան խօսեցաւ յեղափոխութեան վրայ իրր մէկ ժամ: և Պ. Գաղղիական կարգաց մի գեղեցիկ ճառ:

—Նոյն քաղաքի Գրադարանի պաշտօնէնց ընտրութիւնն կատարուեցաւ Դեկտ. 3ին. Պ. Սիմոնեան գրադարանապետ ընտրուեցաւ, Պատ. Յովսէփեան՝ աստեղակար և Մ. Յովսէփեան՝ աստեղակար:

—Հ. Ե. Թանգարանի միութեան վարչութիւնն որոշած է գալ շարթու հրապարակային ժողով մը գումարել՝ մտածելու համար թէ ի՞նչ կարելի է ընել թանգարանն ճոխացնելու և ժողովրդեան աւելի օգտակար ըլլալու դիւրբ մը վերածելու համար:

ՆՈՐ ԿՈՏՈՐԱՎՈՆԵՐ

Պարսկաթրքական սահմանադրութենէն Հոկտ. 21 թուով հետեւեալը կը գրեն Իրաւունքին:

«Սրանից 40 օր առաջ Սալմաստուս գտնուած 28 թուրքահայեր, որոնց մեծամասնութիւն կազմում են Ծառախցիներ և մոկացիներ, երբ իմացեր էին որ իրենց հայրենիքը համեմատաբար աւելի խաղաղ վիճակի մէջ է գտնուում, որոշեցին իրեն վերադառնալ իրենց տեղերը և ապրիլ իրենց գործերով, քանի որ իրենք ոչ փոխտակաւորներ էին և ոչ ալ դատապարտուածներ: Իրենց հետ տարել էին և իրենց զէնքերը:

Երբ Արաղայի գաշտն են հասնում՝ երեք քիւրդ ձիւղորներ են պատահում. սկսում է ընդհարումը. քիւրդերից մի հոգի սպանում է, մնացեալներ փախուցում են, իսկ տըղերը առանց ունէ մնալ շարունակում են իրենց ճանապարհը մինչև Գործոթ կոչուած լեռը, ուր իրենց պաշարը պակասած լինելու պատճառաւ լընուում են համանուն գիւղը: Գիւղացիներից շատերը տեսնում են գրանց և կարծելով թէ գրանք արատահամայն կեղծ յեղափոխականներ են, մասնում են, ինչպէս նաև այն երեք հոգիներին, որոնք իրենց տկարութեան պատճառով չէին կարողացել ճանապարհը շարունակել և մնացել էին Պղարի կոչուած գիւղում: Կատարութեան պաշտօնեայները բռնում են այդ երեքին և քաղաքն են տանում. մնացեալները վանի մերձակայ Արղի կոչուած գիւղի մօտ հասնելիս, կատարութեան զօրքերի կողմից գործելով ընդդիմութեան են հանդիպում, որովհետև ընկերներից մէկը սաստիկ երկչուութեանէն ստիպուած բաժանում է իւրմբից և շուտով կուսակալի մօտն է գնում և զանազան սուտ ու սխալ տեղեկութիւններ տալով նրան՝ առաջնորդում է 400ի շափ զօրքերի, որոնք ուղղակի գալիս են աղայոց վրայ: Նոքա տեսնելով որ անակնկալ կերպով լընդըրը շատ արագ կերպարանք է ստացել, որոշում են կրկին յետ վերադառնալ. ինչ հոգի քաղցած, տկար և վերաւոր մտնում են Սալմաստ:

Մահաւ գիւղի բնակիչները վախենալով մի գուցէ այդ առթիւ իրենք քնատուին, Սալմաստի և Ուոյի ընդհանուր դատարար Չարչամ էլ Միլքիին դիմում և յայտնում են դրանց իրենց գիւղում ապաստանիլը: Չարչամը երեկ կարծելով թէ դրանք են յեղափոխական կոչուած անձնաւորութիւնները, հետեակ եւ ձիւղոր զօրքերով և շնկակ կոչուած քիւրդ հրատակների մի ստուար խումբով գնում է բռնելու: Խեղճերը փախչում մտնում են այգիների լընձանները, յոյս ունենալով որ այդ միջոցով անվնաս պէտք է ազատուին: Բայց Չարչամը շուտով բերել տալիս է ինդանութիւնը և հնձանը քանդել է տալիս. այդ տեղից էլ դուրս գալով ուղում են նորից փախչիլ, բայց մտածելով մի գուցէ խնդիրը ծանր կերպարանք ստանայ, գնում անձնատուր են լինում, յուսալով որ պիտի կարողանան իրենց անմեղութեամբ ազատուիլ: Սակայն Չարչամը բռնելուն պէս նրանք բոլորի վզերն էլ կտրել է տալիս:



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

Սրբեկեան և Տաճկական Ապրանքային Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչու երբ: Հոն կը վաճառուին ամեն տեսակ սեղանազորներ, սեղանի, մէնթըլի, փիտնոյի ևն. մետաքսայ և ոսկեթել ծածկոցներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերիայի աղապանի, քէֆիա, ևն. ևն.:

Հայ վաճառականը կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրեւոր չափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ ո'ւ է տունէ չէ կարող մրցիլ այս տան հետ:

ՀԱՅ ՅԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՄ

Կը ծանուցանեմ թէ ի գիւղորութիւն՝ գեղարանիո նախկին տեսուչը Պ. Ստեփանեան ամէն երեկոյ ժամը 6էն մինչև 8 պիտի ծառայէ իր հայրենակիցներուն:

Պատու ունիմ ըսել թէ սակէ վերջ «Ուրիշ» անուն հրատարակի մագի գեղը պիտի ծախենք շէր 50 սէնթի: Հմուտ բժիշկներ կը վկայեն թէ իր տեսակին մէջ լաւագոյն է մագիը զօրացնելու, բուժելու և նախնական գոյնը պահպանելու համար:

Տակաւ մը գուտ Նորվեգիան ձուկի իւր բերել տուած եմ, որոյ լիպրան 45 սէնթի պիտի ծախենք:

Դեղագիրներն կը պատարասուին ատան և թարմ գեղերէ: Փորձեցէք: ՈՒՆՏՍՈՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ, Մաքս Հանսպրիկ 472 Յրդ ալիւ, Նիւ Եորք:

TURKISH GEMS,

Նարէտարին հօծային մէսէններուն Անգլիերէն կոկիկ թարգմատութիւնը՝ հանգերձ հօծային պատկերով, մաքուր տպագրութեամբ գրքոյի մը վերածած եմ, որն էր Ամերիկացի և այլ բարեկամացնուէր տալու շատ յարմար է: Գինը 25 սէնթ է, զրկելու ծախքը վրաս: Դիմել—Պատ. Ս. Վ. Պէտրիկեան, Rev. S. V. BEDICKIAN, 275 Ridge Ave, ALLEGHENY, PA.

ԵԱՂՈՒՊ ԻՂԳԵԿԱՆ ԵՒ ՅԱԿՈՐ ՏՈՍԹՈՒՄԵՆՆ

38 Լիպրթի փողոց, Ուսթըր, Մասս. Կը ծանուցանեն արգոյ ազգայնոց թէ իրատ լաւ տաճկական ապրանքներ ունին. ինչպէս խալի, թէյպըլ և փրանոյ քվըրներ, մէնթըլն, կիւրեակալի, թաշկինակ, սիկարի թուղթ և ուրիշ ընտիր կարգի շատ տեսակ թրքական ապրանքներ, որոնք ընծայ տրուելու յարմարագոյն իրերն են. այս ամենքը կուզեն ամենատաճան գըներով ծախել լինցնել. եթէ ուրիշ քաղաքաց ազգայինք փութըլ քարթով մը դիմեն, փոյթով պատասխան և գոհացում պիտի ստանան: Կ'ուզեն նաև շափաւոր գնով մը ծախել Փրոսկիթ փողոցի թրքական բաղնիքը:

ՀԱՅ ՈՍՏԱՅՆԱԿՆ ՈՒ ԻՐ ԿԿՈՑԸ

Ես վշտակիր ստայնանկ եմ շուտարած, Հին հանգերձներս ծուրկ ծուրկ պատուած. Տունս այրեցին, պաղ գործատան մէջ կ'ապրիմ, Անանկողին թաց հողի վրայ կը թառիմ: Ողբալակի քշիկ պարէնս ծախեցի, Խեղճ Ձէյթունցոց առէջ, դերձան գնեցի:

Կ'ուզեմ թռչիս, ո'վ իմ ընկեր, իմ կիոց, Գործես կտաւ անտէր ու մերկ Ձէյթունցոց. Ձէյթունցիներ մահուան մօտ են, պէտք է տանք իրենց նուէր ճերմակ շապիկ կամ պատանք:

Անգութ թուրքեր, զիս շարաշար ծեծեցին. Ձեռք, սաք, գլուխ, ողջոյն կողերս ջարդեցին. Ձիս նետեցին մութ, մահաբեր դէշ զընտան, Անոք, անճար. թողախտ տրեց իմ վրան: Թոյլ տուր Աստուած, վրաս մնայ իմ շնչիկ. Գործս կ'ընեմ հապա հանգըլմ մահուան գիրկի: Կ'ուզեմ թռչիս, ո'վ իմ ընկեր, իմ կիոց, Գործես կտաւ անտէր ու մերկ Ձէյթունցոց. Որն ու այրին մահուան մօտ են, շուտով տանք իրենց նուէր ճերմակ շապիկ կամ պատանք:

Հայ ստայնանկ մ'եմ հանգերձի շունիմ պէտք Բրքած շորերս թող իմ մարմնոյս ծածկեն վէրք. Հարկ չէ ինծի խորունկ բրել գերեզման, Հորկս կ'իյնամ, հոն թափեն հող իմ վրան. Թող յիշատակո իմ ջնջուի վերջանայ, Հոգիս Հայը ազատ տեսնէ ու շիլայ:

Բաւ է, դադրիլ, իմ հին ընկեր իմ կիոց, Աչքերդ լոյս, կտաւն հտաւ Ձէյթունցոց. Վերջի արեւս, վերջի հառաշոյ արդ կուտամ Բեզ հետ, կիոց, այս փոսի մէջ կը մնամ: Նոյ. 28, 98. Պոսթըն: ՏԱՐՕՆՅԻՆ

ԽՐԱԿՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեր բաժանորդներէ շատեր, որոց բաժանորդագրութեան ժամանակը լրացած է արգէն, ստանձին ծանուցագիրներ կ'ստանան այս շարթուան ՏԻԳՐԻՍԻ հետ: Ամեն անոնք որք կը փափաքին թերթը ստանալ, պարսին իրենց բաժանորդագրութիւնը նորագել տնայապող, և կամ լուր տալ մեզ մինչև Դեկտ. 25: Այս մասին անտարբեր մնացողներուն թերթերը պիտի դադարեցնենք՝ իրենց լրուութիւնը տեսակ մը մերժում նկատելով:

ՓՈՒՐԻԿ ՍԽԱԼ ՄԸ

«Նոր կեանքի հրաւերին վրայ՝ Նիւ Եորքի ՏԻԳՐԻՍ Լրագրին նախաձեռնութեան ինպատակ Ձէյթունցի Հայ հասարակութեամբ բացուած հանգանակութիւնը յաջողութեամբ կը յառաջանայ»: (Անահիտ) Պատիկ սխալ մը կայ հոս. ՏԻԳՐԻՍԻ նախաձեռնութեամբ ինպատակ Ձէյթունցի բացուած հանգանակութիւնն ո'չ թէ Նոր կեանքի հրաւերին, այլ Տ. Կ. Փափագեանի մէկ հրաւերին վրայ սկիսեցաւ ամիսներ տուալ: Տե՛ս ՏԻԳՐԻՍ Թիւ 42:

ՆՈՐ ՏԱՐԻԻ ՀԱՆԴԵՍ

1899 Յունվար 7 Ծարաթ իրիկուն Ն. Ե. Հայ—Աւետարանական եկեղեցին՝ երիտասարդաց Բրիտանիական Ընկերութեան մեծ սրահին մէջ Նոր Տարիի հանգէսը պիտի տայ: Ձանքեր բնաւ խնայուած շեն հանգէսը փայլուն և միանգամայն օգտակար ընելու: Բնմին վրայ տեղ տրուած է անոնց, որոնք մեզի կրնան սիրաւ ազնուացնող և ճաշակը բարձրացունող արուեստը ներկայացնել: Հանդիսին տոմարակները կը ծախուին Պր. Տ. Պ. Տօնճեանի քով. 98 իսթ, 23րդ փողոց: Գործադիր ժողովը Հայ—Աւետ. Եկեղեցոց:

Բ. ՊՍՏԱՍՍԱՆ ԿԵՂԻՐ. ԿՕՄԻՏԵԻՆ

Հայրենակիցներ, Ինչպէս կաքաւը երբ որսորդին առջևէն հալածուելէն ճարը կը հատ-

Աս կարգի բազում վերաբերումները ներսուզ վրայով մ'ը թէ կը գործա-

Ա.ՉԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ


Նկատելով որ Ամերիկայի մէջ, տեղական լեզուին անտեղեկ ազգա-

MARK C. MEAGHER,

St. Paul Building, No. 220 Broadway, New York City.

ՀՈՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱՄ ՄԵՇՍԿՈՅՆ ՆԻՒ ԵՈՐԻՒ ՄԷՋ

Շարաթական արժեքը \$1.00 միայն ՄԵԿ տո-



Բնակութեան համար վայր մընէ փարք, որուն գե-

մար խիստ յար- Մուրէյ շիլ ղեցիկ անասանը

ԹԱՇՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱԳՈՐԾ ԵՒ ՄՍՍՎԱՃԱՌ

573-579 ԲԵՅՄՊՐԻՃ ԸՍԹՐԻԹ

ԲԷՅՄՊՐԻՃ, ՄՍՍՍ.

ԲԱՉՄԱՎԷՂ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

Ամսագիր

Գրական, Բանասիրական, Կրթական

Եւ Գիտական.

Կը հրատարակուի Վենետիկի Միտ-

Redaction de la revue BAZMAVEP, St. Lazare VENISE, Italie.

ԱՆԱՀԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական Գեղարուեստական

Ա. ՉՊԱՅԻՆ, Սմբագիր:

Տարեկան քառասորդադին է \$2.00

Երկու տարի միայն:

Հասցէն՝

A. Tchobanian, 6, Place de l'Odeon,

PARIS, France.

ՊՈՒԼՂՈՒՐԻ ՄԻՍՏԵՍԱԼ ԸՆԿԵՐՈՒԹ.

BULGUR MANUFACTURING CO.

151 Union St, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն թէ երկարատե

Պուլղուրի լիպրան կարծէ 3½ ունի

Պատիւ ունի ծանուցանել արգոյ

Վճարուցանել կանխիկ կըլան:

Ճանապարհի ծախսը գնողին վրայ է:

ՊՈՒԼՂՈՒՐ--ՊՈՒԼՂՈՒՐ--ՊՈՒԼՂՈՒՐ

ՊԱՂՏԱՍՐ ԹԱՇՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

B. TASHJIAN & Co., 53 MAIN ST., BANGS COURT, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արգոյ Հասարա-


Պատիւ ունի ծանուցանել արգոյ

ՅԱԿՈՐ ԲԱՐԱԿԱՆ

Ամերիկական և Արևելյան ընդհանու-

Նպարավաճառ-Կրօնըրիս,

Թիւ 45 Էքսքէնճ փողոց, Ուսթըր:



Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ.

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ.

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջ կը վաճառուին

Հ Ի Բ Զ Օ Լ Ա

ՄԱՂԻ ԴԵՂ

* HIRSOLA *



A HAIR FOOD FEEDS, STRENGTHENS, CLEANS AND ANOORS THE HAIR.

Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլե-

Հին 50 Մէյթ միայն:

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՅ ՄՍՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ

Հեղինակներն իրենց իւրաքան-

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրու-